Արձանագրություն N 2

Երևան քաղաքի Կողբացի փողոցի՝ Թումանյան-Ամիրյան փողոցների միջև ընկած հատվածում երկկողմյա մայթերի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԽԾՁԲ-20/4 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան 02.09.2020թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Աբրահամյան/գնահատող/, Ա. Սարգսյան / գնահատող /, Կ. Հարությունյան /բացող/, Ա. Ղալումյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԲՄԽԾՁԲ-20/4 » ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ա. Կիրակոսյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2020 թվականի սեպտեմբերի 2-ին, ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

2. «ԵՔ-ԲՄԽԾՁԲ-20/4» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի մասին

(Ա. Կիրակոսյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակցի անվանումը
1	ԱՁ Վահրամ Կնյազյան
2	«Իրտիգ» ՍՊԸ
3	«Աստիճան» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկի մասին

(Ա. Կիրակոսյան)

3.1 Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Երևան քաղաքի Կողբացի փողոցի՝ Թումանյան-Ամիրյան փողոցների միջև ընկած հատվածում երկկողմյա մայթերի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ				
Մասնակցի անվանումը	Նախատեսվող ֆինանսական միջոցը	Առաջարկած գինը		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր
«Աստիճան» ՍՊԸ	1634000	900000		900000
«Իրտիգ» ՍՊԸ		1324000	264800	1588800
ԱՁ Վահրամ Կնյազյան		1494000		1494000

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.Տվյալներ բացված հայտերում պահանջվող /պարտադիր/ փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա. Կիրակոսյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Աստիճան» ՍՊԸ	Բավարար
«Իրտիգ» ՍՊԸ	Բավարար
ԱՁ Վահրամ Կնյազյան	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի շրջանակներում բանակցությունների անցկացման անհրաժեշտության մասին

(Ա. Կիրակոսյան)

5.1 Հաշվի առնելով, որ սույն ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված 6-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և ընտրված մասնակցին որոշելու նպատակով անցկացնել գների նվազեցման բանակցություններ՝ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի:

5.2 Գների նվազեցման բանակցությունները կկայանան 08.09.2020 թվականին ժամը 12:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ 321/1 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Կիրակոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 08.09.2020 թվականին ժամը 12:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ 321/1 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Կիրակոսյան

Անդամներ՝ ---------- Ա. Սարգսյան

---------- Ռ. Աբրահամյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ա. Ղալումյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան